

## ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՄԵԿՆԵՑԱԻ ԱՄՄԱՆ



Ապտալա թագաւոր կը դիմաւորէ Գախագահ Լահուտը:

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ յետմիջօրէին Պէյրութէն մեկնեցաւ Ամման, գլխաւորելով Արաբական Լիկայի ԺԳ. վեհաժողովին մասնակցող լիբանանեան պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմեն ընդհանուր ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն Կոր. Ժամիլ Սայէտ, արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Չուհէյր Համտան, Ամմանի մէջ Լիբանանի դեսպան Ատիպ Ալամէտ-տին, արտաքին գործոց նախարարութեան քաղաքական հարցերու բաժնի պետ Նաժի Ապի Ասի եւ նախագահական պալատի տնտեսական եւ ընկերային հարցերու բաժնի ընդհանուր տնօրէն Էլի Ասսաֆ:

Վարչապետ Ռաֆիք Հարիրի, որ մաս կը կազմէ պաշտօնական պատուիրակութեան, Ամման պիտի երթայ եւ պատուիրակութեան պիտի միանայ այսօր, Երեքշաբթի յետմիջօրէին, որովհետեւ կէսօրէ առաջ ներկայ պիտի գտնուի խորհրդարանի լիագումար նիստին:

## ՄՈՒՊԱՐԱՔ ԿԸ ՔՆՆԱԴԱՍԷ ԻՍՐԱՅԷԼԸ

### ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐՈՒ ՏԱՐԱՓԻ ՏԱԿ Կ'ԱՌՆԵՆ ԱՆՁԵՆ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐ

Իսրայէլեան ուժեր վեց պահեստիցիներ վիրաւորեցին երէկ Այսրյորդանանի Երիթով քաղաքին մէջ, ուր պահեստիցիներ լողորթի ցոյց մը կազմակերպած էին Իսրայէլի ղէմ եւ ցուցարարները կը քարկոծէին իսրայէլացի զինուորները: Ականատեսներ ըսին, որ ցուցարարները քարկոծած են քաղաքին մուտքին ճակող զինուորները, որոնք հակադարձեցին ձգարտէժէ փամփուռներով:

Միւս կողմէ, «Էմնըսթի Ինթըրնէշնըլ» երէկ հրապարակեց տասը կէտերէ բաղկացած փաստաթուղթ մը, որ կոչ կ'ուղղէ պահեստիցիներուն եւ իսրայէլացիներուն յարգելու մարդկային իրաւունքները, հակառակ իրենց միջեւ գոյութիւն ունեցող սուր վէճերուն ու տարակարծութիւններուն:

«Էմնըսթի» ընդհանուր քարտուղարը ըսաւ, որ

չարթակներէն տեսակցուած ինքնեցած է պահեստիցիներ իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի հետ: Ան աւելցուց սակայն, որ իսրայէլացի նախարարներ մերժած են տեսակցուած ինքնեցած իր խնդրանքը:

Միջազգային խմբակը հակամարտ կողմերէն կը պահանջէ հրաժարուի սպանութիւններէ, քաղաքայիններ շարչարելէ եւ կալուածական ձեռքարկութիւններ կատարելէ: Անիկա կոչ կ'ուղղէ նաեւ պահեստիցիներ իշխանութեան ջնջելու մահապատիժը, որ կը կիրարկուի Իսրայէլի հետ գործակցելու յանցանքով ամբաստանուած պահեստիցիներուն հանդէպ:

«Էմնըսթի» կողմէ հրապարակուած յայտարարութիւնը մարդկային իրաւանց վտանգաւոր խախտում կը նկատէ Իսրայէլի կողմէ կազմուած

Այսրյորդանանի շրջափակումը:

#### ՄՈՒՊԱՐԱՔ ԿԸ ՔՆՆԱԴԱՍԷ ԻՍՐԱՅԷԼԸ

Եզրիպտոսի նախագահ Հիւսնի Մուպարաբ ըսաւ, որ Իսրայէլ կը հաւատայ, թէ «ուժը իրաւունք է»: Մուպարաբ քննադատեց Իսրայէլը, դիտել տալով, որ պահեստիցիներուն հետ ծայր տուած խռովութիւններն ու վայրագութեան ալիքը կրնայ տարածուիլ դէպի շրջանի այլ երկիրները:

Մուպարաբ աւելցուց, որ այն պահուն, երբ արաբները պատրաստակամութիւն կը յայտնեն ընկանոն կապեր հաստատելու Իսրայէլի հետ, հրէական պետութիւնը կ'որդեգրէ ժխտական միջոցառումներու քաղաքականութիւն մը՝ համոզելով, որ իրաւունքը կը պատկանի ուժին:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ԻՐԱՔԻ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԵՏԻ ԸԼԼԱՆ ԱՄՄԱՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ ՓՇՈՏ ՀԱՐՅՐ



Սուրիոյ եւ Սէուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարարները՝ Ֆ. Շարէհ եւ Ֆայսալ իշխան:

Արաբական երկիրներու ղեկավարները այսօր Ամմանի մէջ կը սկսին երկօրեայ վեհաժողովի մը, որուն օրակարգին առաջըը պիտի կազմեն Իրաքի պատժամիջոցներն ու պաղեստինեիսրայէլեան տագնապը:

Երէկ արդէն իսկ Ամման ժամանած էին վեհաժողովին մասնակցող ղեկավարներն ու բարձրաստիճան պատուիրակութիւնները:

Արաբ պատուիրակներ դիտել տուին, որ անցնող շաբաթավերջին ի վեր միջնորդութիւններ կը կատարուին իրաքի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ՝ փրկելու համար երկօրեայ վեհաժողովը:

Արաբ արտաքին գործոց նախարարները ամբողջ շաբաթավերջը տրամադրեցին հասնելու համար լուծումի մը, որ գոհ կը պահէ թէ՛ Իրաքը, թէ՛ անոր թշնամի Քուէյթն ու Սէուտական Արաբիան: Սակայն այդ ճիգերը բոլոր ի դերէ ելան եւ մինչեւ երէկ զիջել կարելի չէր եղած եզրակացութեան մը յանգիլ: Յստակ չէ, թէ վեհաժողովին մասնակցող ղեկավարներն ու պատուիրակութիւնները ի՞նչ եզրակացութեան պիտի յանգին, իստկապէս երբ վեհաժողովի աւարտին պիտի հասնին պատժամիջոցներու գծով որդեգրուելիք բանաձեւին:

Շար.ը՝ էջ 10

## ԹՈՒՐԲԻԱ - ՅՈՒՆԱՍՏԱՆ ՄԵՐՁԵՑԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Սապահիթին Չաքմաթօլլու կոչ ուղղեց Յունաստանի՝ նոր քայլեր առնելու, բուրբեյումական գործակցութիւնը ամրապնդելու ուղղութեամբ:

Թրքական «Թի. Ար. Թի.» պատկերասփիռի կայանին տուած հարցազրոյցի մը ընթացքին Չաքմաթօլլու ողջունեց Թուրքիոյ հետ յարաբերութիւնները բարելաւելու մասին յոյս իր պաշտօնակից Աքիլ Յոխս-ժոփուլուի յայտարարութիւնները: Սակայն ան նշեց, որ թրքական կողմը պիտի նախընտրէր գործակցութեան քայլերը եւ ոչ թէ՛ խօսքեր: Չաքմաթօլլու կոչ ուղղեց Աթէնքի՝ պատագնակցական եզրակացումով յունական կողմին: «Պաշտպան երկիրները պէտք է ստիպուին միասին ապրիլ իբրեւ բազմազգ համայնութիւն, ինչպէս որ եղած է Օսմանեան կայսրութեան 500 տարւան տիրապետութեան շրջանին», ըսաւ Չաքմաթօլլու:

Ա. Յոխսժոփուլու «Մի. Էն. Էն. - Թուրք» պատկերասփիռի կայանին հետ հարցազրոյցի մը ընթացքին ըսած էր, որ Թուրքիա եւ Յունաստան պէտք է գործակցին, որպէսզի ՕՊՄՆԻ մէջ յաճախ իրարու հակադրուող երկու երկիրները Պաշտպան շրջանի կայսրութեան սիւնարդ ղառնան: «Թուրքիա եւ Յունաստան շրջանի մեծագոյն երկիրներն են պատասխանատու են շրջանի պաշտպանութեան եւ կայսրութեան: Ներկայիս գործակցելու եւ ոչ թէ համադրուելու ժամանակն է», ըսած էր ան:

Սակայն յոյն նախարարը ընդգծեց, որ Եգէական կղզիներու նկատմամբ Թուրքիոյ ոտնձգութիւնները անընդունելի են, որովհետեւ սահմաններու հարցը լուծուած է 1923ի Լոզանի դաշնագրով:

(ԱՄՆԵՓՐԷՍ)

## ՀԱՒԱՔ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԻՆ ԴԻՄԱՅ

Լիբանանեան Կուսակցութիւններու Համախմբումը երէկ Արաբական Լիկայի կէդրոնին դիմաց կազմակերպեց հաւաք մը՝ Ամմանի արաբական վեհաժողովի նախօրեակին: Հաւաքին մասնակցեցաւ Հ. Յ. Դ. պատուիրակութիւնի մը:

Հաւաքին մասնակցողները Լիբանանի մէջ Արաբական Լիկայի ներկայացուցիչին յանձնեցին յուշագիր մը, որ ուղղուած է արաբական վեհաժողովին մասնակիցներուն: Հաւաքին խօսք առին Համ Մահմուտ Քամարի եւ Ժումաս Ապտալլա:

## ԵՐՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԲՆԸ ԿՈՂՋՈՒՆԷ ԹՈՒՐԲԻՈՅ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐԸ

ՊՐԻԻԲՍԷԼ, 26 (ՌՈՅԹԸՐԸ).- Երրօրեայ Երրօրեայ Միութիւնը Երկուշաբթի օր օղջունած է Թուրքիոյ քաղաքական բարեկարգումներու ծրագիրը իբրեւ «անկունագրար» Ե. Միութեան անդամակցութեան ճանաչումը վրայ, սակայն անիկա յայտնած է, թէ Անգարա յաւելուելով քայլերու պէտք է դիմէ բանալի հարցերու գծով, ինչպէս՝ մասնապատիժի շնչումը:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմ Երկուշաբթի օր Պրիւքսել կը գտնուէր ծրագիրը պաշտօնապէս ներկայացնելու համար Ե. Միութեան ընդարձակման հարցերու յանձնակատար Կունթըր Վերհէօկընի՝ Անգարայի մէջ անոր հրապարակումէն շաբաթ մը ետք:

Ճէմի հետ իր տեսակցութենէն ետք, Վերհէօկըն թղթակիցներու յայտնած է, թէ Թուրքիոյ մշակած ծրագիրը, որ Ապալիւն Ծրագիր կը կոչուի, «Քաղաքական բարեկարգումներու հետոյ հաստատութեամբ ծրագիրի մը առաջին հանգրուանը կը կազմէ»: «Անիկա սկսման կէտ մըն է Թուրքիոյ արմատական այլափոխումին դէպի արդիական ժողովրդավարութիւն մը», ըսած է ան:

Ե. Միութիւնը ուզած է ամէն գնով շեշտը դնել ծրագիրին դրական երեւոյթներուն վրայ, մանաւանդ որ պէսպի երկիրն էլեւըտական տագնապը աւելի էս ծանրակշիռ չդարձնէ: Սակայն Վերհէօ-

կըն, որ առաջին անգամ ըլլալով հրապարակուի կ'արտայայտուէր թրքական ծրագիրին մասին, նաեւ պոնուար արտայայտութիւն մը ունեցած է 65 միլիոն բնակիչ ունեցող երկրին դիմագրուած քաղաքական մարտահրաւերներուն գծով:

«Ինչ կը վերաբերի Ե. Միութեան անդամակցութեան համար քաղաքական չափանիշներուն, նախնական վերլուծում մը ցոյց կու տայ, թէ յաւելուելով ճիգեր անհրաժեշտ պիտի ըլլան կարգ մը մարդերու մէջ, ինչպէս՝ մասնապատիժի շնչումը եւ բոլոր քաղաքացիներուն մշակութային իրաւունքներու ապահովումը, ինչ ալ ըլլալ անոնց ծագումը»:

Շար.ը՝ էջ 2

## ԹՈՒՐԲԻԱ - ԻՐԱԿ - ՅՈՐԴԱՆԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒՆ ԹԱՓ ՏԱԼՈՒ ԾՐԱԳԻՐ

Թուրք գործարարներու եւ առեւտրական մարդի պաշտօնատարներու պատուիրակութիւն մը անցեալ շաբաթ աւարտած է արաբական մայրաքաղաքներ մէջ շարժուած շրջապտոյտ մը՝ Իրաքի եւ Յորդանանի հետ տնտեսական կապերուն թափ տալու առաջադրու-

թեամբ: 400 անդամ հաշուող պատուիրակութիւնը իրաքեան եւ յորդանանեան ընկերութիւններու հետ աւելի քան 250 միլիոն տոյար արժողութեամբ առեւտրական պայմանագրութիւններ կնքած է: Արտաքին առեւտրի փոխ քարտուղար Քուրթստ Թուրքմէնի գլխաւորութեամբ պատուիրակութեան միջին արեւելեան շրջապտոյտը կազմակերպուած էր Արտածողներու Թրքական Միութեան կողմէ:

Շրջապտոյտէն առաջ, Թուրքմէն հրապարակեց զանգատած է, թէ Իրաքի, Իրանի եւ Սուրիոյ հետ Թուրքիոյ առեւտրական փոխանակումները երկիրն արտաքին առեւտրի հազիւ 8 առ հարիւրը կը ներկայացնեն: Ան ըսած է, որ Անգարա յանձնառու է իր անմիջական զբաղմունքներուն հետ տնտեսական յարաբերութեանց թափ տալու:

Որոշ յառաջդիմութիւն մը արձանագրուած է՝ Իրանը Սուրիոյ միացնող եւ Թուրքիայէն անցնող երկաթուղի մը վերաբացուած է երկու շաբաթ առաջ՝ 10 տարի անգործ մնալէ ետք:

Նոյնպէս մօտաւորապէս երկու շաբաթ առաջ, Թուրքիոյ ուժանիւթի նախարարը՝ Ճումհուր Էրսոյլմէր, Դամասկոս կը գտնուէր ներկայ գտնուելու համար Սուրիան, Լիբանանը եւ Եզրիպտոսը կապող ելեկտրական հո-

սանքի նոր գիծի մը բացումին:

Շրջանային ելեկտրական ցանցին կառուցումը, որ կը վերաբերի նաեւ Թուրքիոյ եւ Յորդանանի, քանի մը ամիսէն պիտի ամբողջանայ:

Ինչ կը վերաբերի Իրաք - Թուրքիա յարաբերութեանց ընկանոնացման հարցին, Հոյստայի Լէյտըն համալսարանի թրքական ուսումնասիրութեանց բաժանմունքի տնօրէն Էրիք Եան Յուրբըր կ'ըսէ, թէ մօտիկ ապագային ամբողջական մերձեցում մը անհաւանական է, հակառակ անոր որ անիկա պիտի նպաստէ ՔԱԿի հետ Թուրքիոյ հարցերու լուծման:

«Սակայն Թուրքիա ելեւտական տագնապի մը մէջ կը գտնուի եւ կը փորձէ Արեւմուտքէն 25 միլիոն տոյար պահանջով: Հետեւաբար անիկա այժմ չի կրնար Մ. Նահանգներուն հակադրուել», կը յայտնէ ան:

Իսկ Սուրիա - Թուրքիա յարաբերութիւնները կը զիմարդաւեն զլիսաւոր երկու խոչընդոտները:

Սուրիա, Իրաքի կողմէն, Անգարան ամբաստանած է Եփրատի եւ Տիգրիսի ջուրերը սեփականացնելու յանցանքով անոնց վրայ ամբարտակներ կառուցելով:

Սուրիա նաեւ կը պահանջէ Ալեքսանդրէթը, որ սուրիական հողամաս կը նկատուի:

Շար.ը՝ էջ 10

# ԻՄԱՄ ՄԱՏԸՐԻ ԱՆՀԵՏԱՑՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ Է

Կ ԸՄԷ ՀԱՐԻՐԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկ հաստատեց, որ Իմամ Մուսա Սատրըի անհետացումը պայմանավորված է Երևանի հարցի և պետությունը պատրաստ է բոլոր ուղղություններով աշխատանք տանելու, այս հարցին դրական լուծում մը տալու համար:

Հարիրի կը խօսեր Իմամ Սատրըի հարցի հետապնդման ազգային յանձնախումբի պատուիրակությանը ընդունած ատեն: Շիներու Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ, ճապարներու միւֆթի շէյխ Ապտէլ Էմիր Քապալան, որ պատուիրակությանը կը գլխաւորէր, յայտարարեց, թէ վարչապետէն պահանջած են պարզապէս կանգնիլ նախագահի վրայ: Ըմիլ Լախուտի կեցուածքին, որ կը պահանջէր հարցը արծաթով նախարարաց խորհուրդի ժողովին: Ան յայտնեց, որ Հարիրի ընդառաջելու խոստում տուած է:

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻ ԵՐԵՎԱՆԻ ԸՆԴՈՒՆԵՂ ԱՅԳԵՂՈՒԹՅԱՆ ՄԻԱԳԵՂԱՅԻՆ ՆԱԿԱՆԳՆԵՐՈՒ ՂԵՍԱԿԱՆ ՏԵՂԵՎՈՒ ՍԱՐՐԻՖԻՍԻ, ՈՐ ԵՎԵՐՄԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ԲՆԱՐԿԻ ԵՆ ԶՐԶԱՆԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՐԹՈՐՆԵՐԻ ՈՒ ԱՐԱՐՔԱԿԱՆ ՎԵՏԱԾՈՂՈՎԸ:

Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի այն ամբաստանութիւններուն, թէ Լիբանանի ահաբեկչութեան կեդրոնատեղի դարձած է, Սարրիֆիս ըսաւ. «Չենք հաստատ, որ մագլցողական ուժը, ո՛վ որ ըլլայ պայման դրժածողը, կրնայ նպաստել մեր ցանկացած մթնոլորտի ստեղծումին, եւ մենք կ'ուզենք, որ տիրէ բոլոր կողմերուն նպաստաւոր հանդարտութիւն»:

Խորհրդարանը այսօր կը գումարէ օրէնսդրական ընդհանուր ժողով մը, ամբողջացնելու համար քննարկումն ու վաւերացումը իր նախորդ նիստին օրակարգին վրայ տեղ գտած օրինագիծներուն եւ օրէնքի առաջարկներուն: Անոնց շարքին են պետական խորհուրդներու միացման օրինագիծն ու քրէական հարցերու դատավարութեան կանոններու փոփոխութեան օրինագիծը:

● ԱՇԽԱՏԱՆՔԻ նախարար Ալի Քանսո կոչ ուղղեց միացեալ ճակատ կազմելու՝ դէմ դնելու համար Լիբանանի եւ Սուրիոյ դէմ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի սպառնալիքներուն:

Քանսո ըսաւ, որ լիբանանցիք Թաէֆի մէջ համաձայնած են, որ Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ յարաբերութիւնները պետք է մասնաշատուկ ըլլան, եւ համախոհութիւն գոյացած է, թէ միակ թշնամին Իսրայէլն է:

Շարը՝ էջ 10

## ՄԱՀԱԶԴ

- Տիկին Անժէլ Գասպարեան
- Տէր եւ տիկին Անդրանիկ Գասպարեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Լամա Գասպարեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Անդրանիկ Կիւլտայեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Արա Պօղոսեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Ա. Սարրիսեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Յարութիւն Գասպարեան եւ զաւակունք
- Տիրամայր Մարի Չոլոյեան եւ զաւակունք
- Օշական արք. Չոլոյեան
- Տէր եւ տիկին Ժիրայր Գոնիայեան եւ զաւակը
- Տէր եւ տիկին Մկրտիչ, Սերոբ, Ժիրայր Արապեան եւ ընտանիք

Տիր Արշակ Տոնոյեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր, մօրեղբօր, քեռայրին եւ հարազատին:

## ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՄԱՐԵԱՆԻ (Ծնեալ՝ Տիգրանակերտ, 1924ին)

մահը, որ պատահեցաւ Զորքըարթի, 21 Մարտ 2001ին, արտի հիւանդութեան պատճառով, Լոս Անճելըս: Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 27 Մարտ 2001, կէսօրէ առաջ ժամը 12:00ին, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր տաճարին մէջ, ուրիշ հանդուրեցանք մարմինը պիտի փոխադրուի Ուիլիամսի «Ռոզ Հիլ» գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը:

## ՄԱՀԱԶԴ

- Տէր եւ տիկին Մարտիկ Մատենեան եւ զաւակունք
- Տիկին Թերէզ Պուտաբեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Զաքար Սուրատեան եւ զաւակունք
- Օրիորդ Սօսի Մատենեան
- Տէր եւ տիկին Գասպար Գասպարեան եւ զաւակունք
- Տէր եւ տիկին Վարդան Պուտաբեան եւ զաւակունք
- Օգնական ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գովեն իրենց մօր, մեծ մօր եւ հարազատին

## ՎԱՐԴԵՆԻ ՄԱՏԵՆՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 23 Մարտ 2001ին, Լոս Անճելըսի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան: ● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապը: ● Յուանկութիւնները կ'ընդունուին Երկուշաբթի 26, Երեքշաբթի 27 եւ Չորեքշաբթի 28 Մարտին, տիկին Թերէզ Պուտաբեանի բնակարանը, Պուրճ Համուտ, Սինէ Սանթրալի կից, «Աթոյեան» շէնք, Ա. յարկ:

# ՇԵՅՆ ՆԱՍՐԱԼԼԱ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԵ ԶԱՐՈՆԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՒՆ

Հրկայալի ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալլա երկ պատասխանեց Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի կողմէ Լիբանանի եւ Սուրիոյ ուղղուած սպառնալիքներուն ու Իրանի կողմէ Հրկայալի տրամադրուած հետոյ հաստատութեանը իրարմանութեան մասին հարցումները:

«Մենք շահագրգռուած չենք այս տեղեկութիւններու հաստատումով կամ հերքումով. Շարոն կը կարծէ, թէ մենք, իրաւանցիներ, պիտի մտահոգուինք, երբ ըսէ, թէ կը կարծէ, որ մենք հրթիռներ ունինք. մինչ մենք երջանիկ պիտի ըլլանք, եթէ մենք հրթիռներ կան մեր տրամադրութեան տակ», ըսաւ ան: Շէյխ Նասրալլա նկատել տուաւ, որ Շարոն միայն Քիւրիաթ Շըմոնայի եւ Նահարիայի անվտանգութեամբ չէ մտահոգուած, այլ նաեւ՝ Հայֆայի, Թիպերիատի եւ ամբողջ հիւսիսային Պաղեստինի անվտանգութեամբ, եւ այսօր կը փորձէ ստեղծել այնպիսի հարց մը, որ կը նմանի Քուպայի մէջ Միացեալ Նահանգներու դէմ ուղղուած խորհրդային հրթիռներու հարցին:

## ԵՐՈՂՈՎԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած Ա. էջէն «Կարելոր է, որ Թուրքիոյ օրէնսդիր ծրագիրը եւ անոր հիմնարկութիւններուն անհրաժեշտ բարեկարգումները կարելի եղածին չափ արագօրէն ընթացքի մէջ դրուին», շեշտած է ան:

## ԱՆՈՐՈՇ ՎԱԵՐԱԹՈՒՂՈՅ ԱԸ

Թուրքիա, որ Դեկտեմբեր 1999ին պաշտօնապէս Ե. Միութեան թեկնածու դարձած էր, դիմում ներկայացուցած միակ երկիրն է, որ տակաւին բանակցութիւններու չէ սկսած անոր մարդկային իրաւանց մարզին մասին գոյութիւն ունեցող մտահոգութիւններուն պատճառով:

Լուսարձակներէ հետո, Պրիքսէյի մէջ դիւանագետներ Ազգային Ծրագիրը կը նկարագրեն իբրեւ չափազանց անյատակ եւ կ'ըսեն, որ յստակ չէ, թէ Թուրքիոյ կառավարական ընկերակցութիւնը, որուն անդամ են ծայրայեղ ազգայնականներ, պայմանագրութեան պիտի դնեն:

Ծրագիրը մահապատիժին շնչուծ միջին ժամանակով նպատակ կը նկատէ, որոշումը խորհրդարանին ձգելով:

Անկախ նաեւ անուղղակիօրէն կ'ակնարկէ քրտերի կ'գծով իրաւունքներու փշոտ հարցին, հաստատելով թէ թրքերէնէն անկախ այլ լեզուներ պատարտէ կարելի պիտի ըլլայ գործածել, սակայն անկախ յստակ թելադրանքներ չի կատարել:

Ե. Միութիւնը երկար ատենէ ի վեր կոչ կ'ուղղէ Թուրքիոյ, որ իր մարդկային իրաւանց մարզը բարելաւէ, նշելով յատկապէս թէ անկախ իրաւունք պետք է տայ իր 12 միլիոն քիւրտներուն, որ իրենց լեզուով սփռուելու դատարարակեն:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ ՎԱՆԱՅ ՉԱՅՆ

Այսօր, կէսօրուան ժամը 12:00ին կրնաք ունկնդրել Համազգայինի կազմակերպած դասական համերգին մասնակիցները

**ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՀԱԿԵԱՆԻ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ**

Եւ **ՕԼԿԱ ԽԱՉԻԿԵԱՆԻ** հետ մեր հարցազրոյցը:

Հարցազրոյցը կրկին պիտի սփռուի կէսօրէ ետք ժամը 4:00ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՔՐԻՍՏՈՆԵՆԻԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՕՆ ՀՈՋԱԿՄԱՆ 1700ԱՄԵԱԿԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ՈՒԽՏԻ ՕՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ

## 1700ԱՄԵԱԿԻ ԾԱՄԲՈՎ ՈՒԽՏԻ ԹԱՓՕՐ ԴԷՊԻ ԱՆԹԻԼԻԱՍ

Ուրախութեամբ կը ծանուցենք մեր բարեպաշտ ժողովուրդին, որ այս տարի, 1700ամեակի առիթով, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանի Ուխտի Օրը առաւել հանդիսութեամբ կատարելու համար կազմակերպուած է Ուխտի Թափօր:

Կիրակի, 1 Ապրիլ 2001ի առաւօտեան ժամը 7:30ին, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեանի գլխաւորութեամբ, հոգեւորական դասը հաւատալից ժողովուրդի բազմութեամբ Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցին կանոնաւոր թափօրով պիտի քալէ դէպի Անթիլիասի մայրավանք:

Շարականներու երգեցողութեամբ ուխտաւորներու թափօրը պիտի առաջնորդեն Լիբանանի թեմի դպրաց դասերը դէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճար, իբրեւ ուխտաւորներ Ս. Գրիգոր Լուսաւորիչի դարաւոր Աջին:

Կոչ կ'ուղղենք մեր բարեպաշտ ժողովուրդին, հայու վայել լրջութեամբ ու հաւատքով մասնակցելու Ուխտի Թափօրին, ստանալու համար մեր Հաւատոյ Հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Ս. Աջին օրհնութիւնը:

Ծանօթ.- Վերադարձը՝ ապահովուած: ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

# ՍՖԷՅՐ ԱՅՍՕՐ ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

Մարոնիներու Նասրալլա Սֆէյր պատրիարքը այսօր պիտի վերադառնայ Լիբանան: Ժողովրդային ընդունելութիւն մը պիտի կատարուի պատրիարքին:

Մարոնիներու պատրիարքարանի ընդհանուր քարտուղարութիւնը երկ հաղորդագրութեամբ մը կոչ ուղղեց Սֆէյր պատրիարքի ընդունելութեան մասնակցիլ փափաքողներուն, բաւարարուելու միայն լիբանանեան դրօշներ եւ պատրիարքի դիմակարներ բարձրացնելով եւ ոչ այլ բան, մեկնելով այս ընդունելութեան հոգեւորական եւ ազգային բնոյթը պահպանելու նախաձեռնողութեան, եւ արգիլելու համար այս առիթի շահագործումը անմասկան, հաստատական կամ կուսակցական նպատակներու համար:

Հաղորդագրութիւնը նաեւ կոչ ուղղեց ընդունելութեան մասնակցողներուն հետեւելու ներքին ապահովութեան ուժերու անդամներուն, անոնց օժանդակող սկաւտներուն եւ ընդունելութիւնը կազմակերպող յանձնախումբի ցուցմունքներուն, որպէսզի ընդունելութիւնը ապահով եւ հեշտապէս ընթանայ:

Ներքին ապահովութեան ուժերու հրամանատարութեան տեղեկատուական բաժանմունքը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ մարոնիներու Սֆէյր պատրիարքը այսօր երեքշաբթի կէսօրէ ետք ժամը 4:00ին պիտի ժամանէ Պէյրութի օդակայան, պիտի դիմաւորուի նախագահի վրայ: Ըմիլ Լախուտի ներկայացուցիչ, հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քըրտահիի կողմէ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԴԱՐՄԱՆԵԼՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՊԻՏԻ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ապտէլ Ռահիմ Մըրատ երկ հաւատալից, որ կառավարութիւնը պիտի շարունակէ գործադրութիւնը ներդրումներուն թափ տալու եւ տնտեսական տագնապը դարմանելու իր ծրագիրին: «Այս ծիրին ներս պետական պարտքերը կրճատելու համար պիտի ապապետականացուին կարգ մը հաստատութիւններ», աւելցուց ան:

Շրջանային վիճակին մասին նախարար Մըրատ ըսաւ, որ անհրաժեշտ է կազմել արաբական միացեալ ճակատ մը, դիմագրակելու համար մարտահրաւերներն ու իսրայէլեան սպառնալիքները: Ան յիշեցուց, որ Իսրայէլ միշտ աշխատած է պառակտելու արաբները, որպէսզի կարենայ պարտադրել իր կամքը անոնցմէ իւրենց մասնագիտութեան մէջ:

Փափաքելի է, որ գիտակից ծնողներ, ինչպէս նաեւ երիտասարդներ, ուսուցիչներ ու պատասխանատու անձեր մասնակցին այս ամբողջական եւ օգտաւոր դասընթացին, եւ տարրական գիտելիքներուն ու վարժութիւններուն ընտելանան, օգնութեան հասնելու արկածախնդրութեան տան մէջ, դպրոցը, փողոցը, ծովը, գործատեղին, ակումբը, եւ այլն:

Այլ աւելի, այս ամբողջ դասընթացին տեղադրութեան, մեր մասնագետները կը մասնաւոր ընդհանուր առողջապահական հարցերը եւ կանխարգելիչ միջոցները, կորս իւրաքանչիւր անձ պարտի գիտնալ ու կիրարկել:

«ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հինգշաբթի, 5 Ապրիլ 2001, երեկոյեան ժամը 7:00ին, կը սկսի անմիջական օգնութեան դասընթացը «Գարակեօպեան» կեդրոնին մէջ, Պուրճ Համուտ:

Արձանագրութիւն անէն օր կէսօրէ ետք ժամը 1:00էն 4:00, Գարակեօպեան կեդրոն:

«Հանրապետութեան Գարակեօպեան» Հիմնարկի 1956էն ի վեր հաստատուած անմիջական օգնութեան դասընթացը լման փոփոխութեան ենթարկուած է, պատշաճեցնելու համար օրւան կարիքներուն:

Այժմ դասական անմիջական օգնութեան վարժութիւններու կողքին, տասներկու մասնագետ բժշկներ յանձն առած են, շեշտելու անմիջական օգնութեան կարելիութիւնները իրենց մասնագիտութեան մէջ:

Փափաքելի է, որ գիտակից ծնողներ, ինչպէս նաեւ երիտասարդներ, ուսուցիչներ ու պատասխանատու անձեր մասնակցին այս ամբողջական եւ օգտաւոր դասընթացին, եւ տարրական գիտելիքներուն ու վարժութիւններուն ընտելանան, օգնութեան հասնելու արկածախնդրութեան տան մէջ, դպրոցը, փողոցը, ծովը, գործատեղին, ակումբը, եւ այլն:

Այլ աւելի, այս ամբողջ դասընթացին տեղադրութեան, մեր մասնագետները կը մասնաւոր ընդհանուր առողջապահական հարցերը եւ կանխարգելիչ միջոցները, կորս իւրաքանչիւր անձ պարտի գիտնալ ու կիրարկել:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ «ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

Շրջանային վիճակին մասին նախարար Մըրատ ըսաւ, որ անհրաժեշտ է կազմել արաբական միացեալ ճակատ մը, դիմագրակելու համար մարտահրաւերներն ու իսրայէլեան սպառնալիքները: Ան յիշեցուց, որ Իսրայէլ միշտ աշխատած է պառակտելու արաբները, որպէսզի կարենայ պարտադրել իր կամքը անոնցմէ իւրենց մասնագիտութեան մէջ:

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Գոճայեան եւ Քիթապեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, նուիրատուութեամբ եւ հեռագիրով մասնակցից եղան իրենց հօր՝ ՓԱՆՈՍ ԳՈՃԱՅԵԱՆԻ մահան սուգին:

## ԿՈՒՉՈՒԻ

● Երկաթի վաճառատան մը համար գործաւոր մը 18ԵՆ 30 տարեկան: Հեռ. 01-497347 եւ 01-487518/9, ժամը 9:00ԵՆ 16:00:

**ARA TRAVEL** IATA ԱՆՊԱՍ

**ARMENIAN AIRLINES**ի SALES AGENT,

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՐ ԿԸ ՅԱՅՏԵ ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐՈՒՆ, ՈՐ ԿՂԱՇՏՈՎԷ

ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՎԱՆ - ՊԵՅՐՈՒԹ ԵՒ ՇԱԼԷՊ - ԵՐԵՎԱՆ - ՇԱԼԷՊ

ARMENIAN AIRLINES ընկերութեան

● օդանաւային առմանք ● ապահով փոխադրութիւն

**ԱՐԱ ԹՐԱՎԵԼ**, Պուրճ Համուտ, Նամակատան շէնք, Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296

**ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ**

● Արաքս փողոցի վրայ, կալուածագիրով: Հեռ. 01-260626:

# ԻՐԱՔԻ ԴԷՄ ՊԱՏԺԱՄԻՉՈՅՆԵՐՈՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պոլի կառավարութեան կողմէ Իրաքի հանդէպ որդեգրուելիք պատժամիջոցներու նոր քաղաքականութիւնը կ'առաջարկէ ՄԱԿի դէտեր հաստատելու երկիրին սահմաններուն վրայ եւ գլխաւոր օդակայաններուն շուրջ, արգիլելու համար պինակաւ ճարտարարուեստի հետ կապ ունեցող ներածուանները, հաղորդէ «Ուաշինկթըն Փոսթ» երէկ:

Օրաթերթը աւելցուց, որ ծրագիրին լոյսին տակ, Իրաքի սահմանակից երկիրները պիտի քաջալերուին գործակցելու, որպէսզի առիթը ունենան վեղչուած գիններով իրաքեան քարիւղ գնելու: Քարիւղի համար վճարելիք իրենց գումարները պիտի տեղադրուին դրամատնային մասնաւոր հաշիւներու մէջ, որոնք Իրաքի կողմէ պիտի գործածուին քարիւղ գնող սահմանակից երկիրներէն ներածուաններ կատարելու համար: Այդ երկիրները պիտի ըլլան Սուրիա, Թուրքիա եւ Յորդանան:

«Ուաշինկթըն Փոսթ» կը գրէր նաեւ, որ ամերիկեան ծրագիրը կոչ կ'ուղղէ նաեւ ՄԱԿի պատրաստելու անուանացանկը Իրաքէն քարիւղ գնելու իրաւունք ունեցող ընկերութիւններուն, որպէսզի ապօրինի կերպով միջնորդութիւն կատարողներն ու Սատտամ Հիւսէյնի կառավարութեան ապօրինի վճարում կատարողները կարելիութիւն չունենան այդ աշխատանքը շարունակելու:

Արտաքին գործոց նախարարութիւնը անցեալ շաբաթ յայտարարած էր, որ Ուաշինկթըն գրեթէ համաձայնութիւն գոյացուցած է արաբական երկիրներուն հետ Իրաքի հանդէպ պատժամիջոցներու նոր ծրագիրին մասին:

«Ուաշինկթըն Փոսթ» աւելցուց, որ ամերիկացի պաշտօնատարներ կը յուսան ծրագիրին մանրամասնութիւնները եզրակացնել մինչեւ Յունիս:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ՄԵՋ

# ՌՈՊԸՐԹՍԸՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ ԱԼՊԱՆԱՅԻ ԸՍԲՈՍՏՆԵՐԸ

ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար ձորձ Ռոպրթսըն երէկ կոչ ուղղած է Մակեդոնիոյ մէջ ծագումով ալպանացի ըմբոստներուն, որ իրենց պէնքերը վար դնեն եւ պուշացուցած է, որ պինակցութիւնը պալքանեան այս պետութիւնը ապակայունացնելու որեւէ փորձ պիտի չհանդուրժէ:

Ան դիտել տուած է, որ միայն ընտրութիւնները կրնան ճշդել պալքանեան պետութիւններուն ապագան: Մակեդոնական ուժերը քանի մը շաբաթի վեր երկիրին հիւսիսային եւ արեւմտեան գօտիներուն մէջ պայքար կը մղեն ալպանացի պինակներուն դէմ: Կառավարութիւնը կ'ըսէ, թէ անոնք Քոսովոյէն կը թափանցեն:

Ռոպրթսըն յայտնած է, թէ ՕԹԱՆեան ուժեր Քոսովոյի սահմանին կը հսկեն արգելափակելու համար ըմբոստներու եւ վէնքերու Մակեդոնիա մուտքը:



Ալպանացիներ խոյս կու տան Մակեդոնիայէն դէպի Զոսովո:

Մակեդոնիոյ վարչապետը Լիուպո Կեօրկիւսքի, երէկ յայտնած է, թէ հրասայլերով, իրեւանիով եւ ուղղաթիռներով Կիրակի օրուան յարձակումները առիթ տուած են կառավարութեան, որ ըմբոստներու հակազիռին ենթակայ գիւղերը եւ բանալի բոլոր դիրքերը դարձեալ ձեռք ձգեն:

Հակառակ այս հաստատումին սակայն, հիւսիսային Մակեդոնիոյ ամբողջ տարածքին լարուածութիւնը բարձր կը մնար երէկ:

Ոստիկան մը վիրարուած է երէկ, երբ

կարաւանի մը վրայ կրակ բացուած է մայրաքաղաք Սքոփիէի եւ Քոսովոյի հետ սահմանին միջեւ ճամբուն վրայ:

ՄԱԿի գաղթականներու հարցերու պատասխանատու գործակալութեան համաձայն, Կիրակի գիշեր Մակեդոնիոյ կողմէ իրենց խոյս տուած ծագումով հարիւրաւոր ալպանացիներ Քոսովո հասած են:

Անիկա ըսած է, թէ Փետրուարի կէսերէն ի վեր աւելի քան 4500 հոգի Քոսովո անցած է:

(ՌՈՅԹԸՐԸ)

# ՎԱՏԻԿԱՆ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ, ՈՐ ՊԱՊԸ ՅՈՒՆԱՍՏԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Յովհաննէս Պօղոս Բ. պապին ուղղուած հրաւեր մը՝ Ս. Պօղոսի հետքերով Կիպրոս շրջապտոյտ կատարելու գծով, երէկ պայրոյթով ընդունուած է կղզիին յոյն ուղղափառ եկեղեցիին կարգ մը պատասխանատուներուն կողմէ:

Կիպրոսի 5 եպիսկոպոսներէն մէկը՝ Քիրենիոյ Փօլ եպիսկոպոսը, դէմ արտայայտուած է կաթողիկէ եկեղեցիին, որմէ ուղղափառ եկեղեցին բաժնուած է շուրջ 1000 տարի առաջ:

Կիպրոսի արքեպիսկոպոս Խրիստոսոսի յղուած նամակի մը մէջ, ան յայտնած է, թէ պապականութեան

պատմութիւնը ցոյց տուած է, թէ անիկա «ապրող Աստուծոյ եկեղեցին քաղաքական կապակերպութեան մը վերածած է»:

Ան պայրացած է, որովհետեւ Խրիստոսոսն ուսուցած է ծրագրուած հրաւերին առանց նախօրոք 5 եպիսկոպոսներուն կարծիքը առնելու:

Կառավարութեան քանքերը՝ Միքայի Փափափեթրու, եպիսկոպոսին խօսքերը «արմատական անիմաստ արտայայտութիւններ նկատած է»:

Իսկ արքեպիսկոպոսը թղթակիցներու ըսած է, թէ ան «պէտք է հանդարտի»:

## ՎԱՏԻԿԱՆ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ՅՈՒՆԱՍՏԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Միւս կողմէ, Վատիկան երէկ յայտարարած է, թէ Յովհաննէս Պօղոս Բ. պապը Մայիսի սկիզբը Յունաստան պիտի այցելէ:

Պապը, որ 1054էն ի վեր առաջինը պիտի ըլլայ, որ Յունաստան կ'այցելէ, Աթէնք պիտի հասնի Մայիս 4ին եւ յաջորդ օրը Սուրիա պիտի մեկնի:

Ան Մայիս 8ին Մալթա պիտի այցելէ եւ Մայիս 9ին Հռոմ պիտի վերադառնայ, ըստ Վատիկանի:

(ՌՈՅԹԸՐԸ)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԸՐԻՍՏՈՆԵՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՏ  
ՀՈՉԱԿԱՄԱՆ 1700ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ**

**ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԷ**

**ԴԱՄԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ**

**Նախագահութեամբ՝**

**Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՐՄԱՆ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆԻ**

**Կը մասնակցին՝**

**Հայաստանի Ալ. Սպենդիարեանի անուան Պետական Ակադեմական Օփերայի Թատրոնի մենեթրիներ**

**ԸՐԻՍՏԻՆԷ ՍԱՀԱԿԵԱՆ (Մեցցօ սոփրանօ)**

**ԿՈՆՏԱՆԱՆԴԻՆ ՍԻՄՈՆԵԱՆ (Պարիթոն)**

**Դաշնակի ընկերակցութեամբ՝**

**Կոմիտասի անուան Պետական Երաժշտանոցի փրոֆեսոր՝ ՕԼԿԱ ՆԱԶԻԿԵԱՆԻ**

**Տեղի կ'ունենայ այսօր՝ Երեքշաբթի, 27 Մարտ 2001, Երեկոյեան ժամը 9:00ին, Ա.Ս.Ե.Ի «Էսեմպլի Հոլ»-ի մէջ:**

**Տոմսերը կը վաճառուին ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԽԱՆՈՒԹ (Պորժ Համուտ, «Շաղգոյեան» կեդրոն), ՕԵԼԻՃ ԳՐԱՏՈՒՆ (Անթիլիաս):**

**sponsored by: CREDIT SUISSE**

## ՕՍՔԱՐՆԵՐՈՒ ԲԱՇԵՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

# «ԿԼԵՏԻԷՅԹԸՐ» ԽԼԵՑ ԱՌԻԹԻ ԲԱԺԻՆԸ՝ ՀԻՆԳ ՕՍՔԱՐՆԵՐՈՎ



Ճուկա Ռոպրթսըն եւ Ռաբլ Զրօ:

Բրիտանացի Ռաբլի Սքոթի բեմադրած «Կլէտիէյթըր» ֆիլմը իւլեց օսքարներու առիծի բաժինը՝ շահելով հինգ օսքարներ: «Կլէտիէյթըր»-ի գլխաւոր դերասան Ռաբլ Զրօ շահեցաւ լաւագոյն դերասանի օսքարը, ֆիլմը նաեւ շահեցաւ չորս օսքարներ՝ լաւագոյն ժապաւէնի, տարապներու յղացման, ձայնի եւ տեսողական ապրեցութիւններու:

Լաւագոյն դերասանուհիի օսքարը շահեցաւ ձուլիա Ռոպրթսըն «Էրին Պրոքրօվիչ» ֆիլմին մէջ իր տառնածած դերին համար: Օսքարներու 73րդ հանդիսութեան լաւագոյն բեմադրիչի օսքարը շահեցաւ Սթիվըն

Ստրպըրը, որուն բեմադրած «Թրէֆիք» ֆիլմը լուսարձակի տակ կը բերէ թմրեցուցիչներու մաքսանենգութեան շուրջ մղուած պատերազմը:

Օսքարը ստանալէ ետք, դերասան Ռաբլ Զրօ յայտնեց, որ միջապային հեղինակաւոր մրցանակին տիրաւոր կը պարտի բեմադրիչ Ռաբլի Սքոթի: Ճուլիա Ռոպրթսըն ըսաւ, որ քիչ մը անակնկալի մատնուած է:

- Ստորեւ կարգ մը օսքարներ.-
- Լաւագոյն ժապաւէն՝ «Կլէտիէյթըր»:
- Լաւագոյն բեմադրիչ՝ Սթիվըն Ստրպըրը («Թրէֆիք»):
- Լաւագոյն դերասան՝ Ռաբլ Զրօ («Կլէտիէյթըր»):
- Լաւագոյն դերասանուհի՝ ձուլիա Ռոպրթսըն («Էրին Պրոքրօվիչ»):
- Լաւագոյն երկրորդական դերասան՝ Պենիլո Տէլ Թորօ («Թրէֆիք»):
- Լաւագոյն երկրորդական դերասանուհի՝ Մարիա Կէյ Հայտըն («Փոլոք»):
- Լաւագոյն օտար ժապաւէն՝ «Քրաուչինկ Թայլըր, Հիտըն Տրեկըն»:
- Լաւագոյն սինեմաթոկրաֆի՝ «Քրաուչինկ Թայլըր, Հիտըն Տրեկըն»:
- Լաւագոյն ձայն՝ «Կլէտիէյթըր»:
- Լաւագոյն տեսողական ապրեցութիւններ՝ «Կլէտիէյթըր»:
- Լաւագոյն երաժշտութիւն՝ «Քրաուչինկ Թայլըր, Հիտըն Տրեկըն»:
- Լաւագոյն տարապներու յղացում՝ «Կլէտիէյթըր»:
- Լաւագոյն արուեստի բեմադրութիւն՝ «Քրաուչինկ Թայլըր, Հիտըն Տրեկըն»:
- Լաւագոյն էքշըն կարճ ժապաւէն՝ «Քիէրօ Սէր»:
- Լաւագոյն կարճ վաւերագրական ժապաւէն՝ «Պիկ Մամա»:

## ՕՃԱԼԱՆԻ ԴԷՄ ՆՈՐ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱԿԻ ղեկավար Ապտիլլա Օճալան, որ Թուրքիոյ մէջ մահուան դատապարտուած է, կը դիմագրաւէ նոր ամբաստանութիւններ, որոնք կրնան Օճալանի դէմ երկրորդ մահովձիւ մը արձակելու պատճառներ ըլլալ: Թրքական ստեան մը Օճալանի եւ ՔԱԿԻ հարիւր այլ անդամներու դէմ ամբաստանութիւններ ուղղուեց, 1980ական թուականներուն Ուրֆայի մէջ ոճրային խմբակներ կազմակերպելու յանցանքով: Օճալան նոր ամբաստանութիւններուն մասին վկայութիւններ պիտի տայ Իմրայի բանտ կղզիին մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

**ՂԱԶԱԽՍՏԱՆ ԲԱՅՈՒՄԸ  
ԿԱՏԱՐԵՅ ՔԱՐԻՒՂԱՏԱՐ  
ԽՈՂՈՎԱԿԻ ՄԸ**

Ղապախստանի վարչապետը՝ Քասիմձոմարթ Թոքաեւ, երէկ քարիւղի «Թենկիչ» հանքէն ռուսական Նովորոսիսք ուղղուող քարիւղատար խողովակին բացումը կատարած է, կեդրոնական ասիական այս երկիրն է միջազգային շուկաներ ուղղակի առաջին կապը հաստատելով:

Խողովակը առաջին հանգրուանն է լայնածիր ծրագիրի մը՝ Կասպից ծովէն քարիւղ մղելու համար: Անիկա կրնայ յառաջիկայ տասնամեակին Ղապախստանը վերածել քարիւղի աշխարհի մեծագոյն արտադողներէն մէկուն:

Յարդ Ղապախստան պարտադրուած էր իր գրեթէ ամբողջ քարիւղը ռուսական քարիւղատար խողովակներու ցանցին ճամբով արտածել:

Նախկին խորհրդային հանրապետութիւնը այս տարի օրական շուրջ 800 հազար տակառ քարիւղ պիտի արտադրէ, սակայն անոր արտադրութիւնը արագօրէն կ'աճի:

«Անիկա անմոռնալի օր մըն է Ղապախստանի անկախութեան 10րդ տարեդարձին տարուան ընթացքին», ըսած է վարչապետը, կասկեան Աթրաու նաւահանգիստին մէջ, որ արագօրէն հաւանաբար երկիրն քարիւղի մայրաքաղաքը պիտի դառնայ:

«Թենկիչ» հանքը առանձինն 65ն 9 միլիտր տակառ օգտագործելի քարիւղ կը պարունակէ: Ղապախստանի հանք մը՝ «Քաշական», կրնայ 10 միլիտր տակառ եւ աւելի քարիւղ պարունակել, զայն 30 տարուան մէջ աշխարհի մեծագոյն յայտնաբերումը դարձնելով:

Ռուսիա կ'ուզէ, որ կասպեան քարիւղը իր հողամասերէն տարանցուի, շրջանին մէջ քաղաքական իր ապրեցութիւնը պահելու եւ տարանցումէն շահեր ապահովելու համար: Իրան նոյնպէս կ'ուզէ, որ քարիւղը իր հողերէն տարանցուի, մինչ Թուրքիա ինքզինք կը նկատէ արտածման տրամաբանական ճանքան եւ ամերիկեան ուժեղ պոպուլիստներուն կը վայելէ՝ Պաքո - ձէյխան գիծին հարցով:

(ՌՈՅԹԸՐԸ)

**ԲԱՐԵԿԱՐԳՉԱԿԱՆՆԵՐՈՒ ԴԷՄ  
ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻԻ**

ԹԵՀՐԱՆ, 26 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի լեղափոխական պահպանողական ստեանը ձերբակալած է ռուսադակն շարժումի մը ղեկավարը՝ բարեկարգչականներու դէմ ձեռնարկած իր արշաւի ծիրէն ներս, հաղորդեցին օրաթերթերը Երկուշաբթի օր:

Իրանի ռուսադակն մեծագոյն շարժումին ղեկավարը՝ Իպրահիմ Շէյխի դէմ ձերբակալման հրամանագիր արձակուեցաւ Կիրակի օր: Անոր եղբայրը յայտնեց, որ Իպրահիմին հրահանգուած է անմիջապէս ներկայանալ լեղափոխական ստեան հարցաքննութեան համար:

## «ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ» ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Հայաստանի կառավարության Ուրբաթ, 22 Մարտի նիստին ընթացքին, կառավարության որոշումով ստեղծվեցաւ «Համահայկական Երիտասարդական Միջազգային Կեդրոն» հիմնադրամը եւ հաստատուեցաւ հիմնադրամի կանոնադրութիւնը:

Հիմնադրամին գործունէութիւնը ապահովելու նպատակով անհատաց օգտագործման իրաւունքով անոր յանձնուեցաւ Ծաղկաձորի գլխաւոր մարզահամալիրի 3րդ մասնաշէնքը:

Ցայտնեք, որ «Համահայկական Երիտասարդական Միջազգային Կեդրոն»-ի ստեղծման գաղափարը ձեւաւորուած է Հայաստան - Սփիւռք համաժողովի ժամանակ՝ Երիտասարդական Ժողովի շրջագծին մէջ:

Աւելցնենք, որ հիմնադրամին նպատակը Հայաստանի երիտասարդութեան համարկումն է միջազգային երիտասարդական կառույցներուն մէջ: Յառաջիկային նաեւ հիմնադրամի գործադիր տնօրէնը պիտի ընտրուի:

## ՋԻՒՄ ԹԱՊԻՊԵՒՆ ԴԵՍՊՈՒՆՆԱԿԻ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԷՋ

Հայաստանի նախագահի մամուլ գրասենեակը կը հաղորդէ, որ նախագահ Ռուպէրթ Քոչարեանի 19 Մարտի հրամանագրով Աւստրիոյ ղեկավար Զիւլան Թապիպեան նաեւ Հունգարիոյ մէջ Հայաստանի դեսպան նշանակուած է:

## ՀԱՐՑԱՆՈՅՁԻ ՄԸ ՍԱՆԱԿՑՈՂՆԵՐՈՒՆ 42 ԱՌ ՀԱՐԻՐԻՆ ԸՆԿՈՒՆ

Հայաստանի նախագահի մամուլ գրասենեակը կը հաղորդէ, որ նախագահ Ռուպէրթ Քոչարեանի 19 Մարտի հրամանագրով Աւստրիոյ ղեկավար Զիւլան Թապիպեան նաեւ Հունգարիոյ մէջ Հայաստանի դեսպան նշանակուած է:

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄԱՀԱՓՈՐՁԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՂԱԾ Է ԱՐԴԱՐ

Ղարաբաղի մէջ հանրային եւ քաղաքական գործունէութիւն ունեցող Ժողովրդավարական Բարենորոգումներ եւ Մարդկային Իրաւունքներ կազմակերպութիւնը հարցախոյզ մը կազմակերպած է 22 Մարտի մահափորձին առնչութեամբ: Չորս հարցումներէ թաղկացած հարցախոյզին մասնակցած է 329 հոգի:

Ի յայտ եկած է, թէ Ղարաբաղի ժողովուրդին 46,2 առ հարիւրը հետեւած է դատավարութեան ընթացքին, մինչ 8,9 առ հարիւրը անտարբեր եղած է: Հարցախոյզին մասնակցողներէն 42 առ հարիւրը համաձայն, դատավարութիւնը եղած է արդար, իսկ 44,6 առ հարիւրը չէ պատասխանած այս հարցումին:

54 առ հարիւրը կը կարծէ, թէ տեղական օրաթերթերը առարկայականօրէն անդրադարձած են դատավարութեան ընթացքին, իսկ 18,8 առ հարիւրը ըսած է, թէ մամուլին տեղեկագիրները կողմնակալ էին: 27,2 առ հարիւրը չեն կրցած այս մասին յստակ պատասխան տալ:

Հարցախոյզին մասնակցողներուն 72 առ հարիւրին համաձայն, Արցախի նախկին պաշտպանութեան նախարար Սամուէլ Բաբայան կը նպատակադրէր սպաննել Լեռնային Ղարաբաղի օրինական նախագահը՝ Արկարի Դուլախանը: 3,3 առ հարիւրը կը կարծէ, թէ նախագահին մահը ծրագրողը եղած են ոճիւրի կազմակերպիչներէն Սասուն Աղաջանեանն ու իր խումբը, իսկ 19,4 առ հարիւրին համաձայն, «երրորդ ուժ» մը կը փափաքէր սպաննել նախագահը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԶԲՕՍԱՇՐՋԱԿԱՆ ՊԻՋՆԸՍԸ ՄՐՑՈՒՆԱԿ ԶԻ

ԿԸՍԵ ՆԱԽԱԳԱՆ Ո. ԶՈՉԱՐԵԱՆ

Երեւանի տնտեսագիտութեան համալսարանի ուսանողութեան հետ հանդիպման մը ընթացքին Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան յայտնեց, որ թէեւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի յորելանին առիթով, Հայաստանի մէջ գրօսաչըջութեան ոլորտի ենթակառուցները կը զարգանան, սակայն սակագիներու առումով Հայաստան մրցունակ չէ շարք մը երկիրներու համեմատութեամբ:

Նախագահ Ռ. Քոչարեան նշեց, որ Հայաստանի մէջ շատ սուղ են օդանաւի տոմսերը, իսկ գրօսաչըջական գրքեր կը գնուին մէջ Հայաստան երկօրեայ այցելութիւնը կը գնահատուի մօտ 1200 տոլար, մինչդեռ Թուրքիոյ պարագային ան կ'արժէ մօտ 700 տոլար:

Եթէ այսպիսի գիներ մնան, ապա, ըստ Ռ. Քոչարեանի, «Հայաստանի մէջ պիզնէսը, սակայն պիտի ունենայ միայն հայերու համար, զուտ գրօսաչըջական ծրագիրներ պիտի կազմակերպուին միայն սփիւռքահայերու համար եւ իսկական գրօսաչըջական պիզնէսը ապագայ պիտի չունենայ»:

Ռ. Քոչարեան յայտնեց, որ մտադիր է մօտ օրէն խորհրդակցութեան հրահրել, որ փորձ պիտի կատարուի այս հարցերուն լուծումներու ուղիները գտնելու:

## ԾԱԽՈՒ Է

Ճամբորդութեան պատճառով եւ շատ յարմար գինով, 3 անջատ կալուածագիրներով կալուածներ մէկ տարածութեան մէջ, որ կը բաղկանայ.-  
 1.- 2 ընդարձակ խանութներ, աշխատանոցի կամ գանգաւ արհեստի յարմար:  
 2.- Սենեակ մը խոհանոցով եւ բաղնիքով:  
 3.- Չեղանայարկ ընդարձակ մթերանոց:  
 Այս բոլորը միայն 80,000 տոլարի, Նահր պողոտայ, Մար Միայել շրջան: Դիմել պր. Սամուէլին հեռ. 01-444830:

## «ՂԱՐԱԲԱՂԻՆ ՀԱՐՑԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ ՏԱՐԻՆԵՐ ՊԻՏԻ ՏԵԻՔ»

Կ'ԸՍԵ ՊԻ.ՊԻ.ՍԻ.Ի ՄԷԿ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆԸ

Պի.Պի.Սի.Ի վերլուծման Սթիվըն Իկ կը նշէ, թէ Միացեալ Նահանգներու նախկին վարչակազմը կը դժուարանար ճշուժ բանեցնել զարաբաղեան տագնապի կողմերուն վրայ, իսկ նոր վարչակազմին օրով նախադրեալներ կան յուսալու, որ ճշուժը Միացեալ Նահանգներու կողմէ ազդէ Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ առկայ լուրջ տարակարծութիւններուն վրայ, որովհետեւ Միացեալ Նահանգներ քաղաքական եւ տնտեսական սերտ կապեր ունին Հայաստանի, Ազրպէյճանի եւ Թուրքիոյ հետ:

Ըստ Ս. Իկի, Միացեալ Նահանգներու նոր վարչակազմը այս հարցին առնչութեամբ յստակ դիրքորոշում չունի: Փոխզիջումներով հարցը լուծելու տարբերակը կը խնդրեն ներքին գործօնները, յատկապէս՝ հասարակական կարծիքը, մանաւանդ Ազրպէյճանի մէջ: Քարիզեան հանդիպումներէ ետք Ազրպէյճանի դիրքորոշումը կարծրացած է, որովհետեւ կառավարութիւնը գիտէ, թէ փոխզիջումը անընդունելի է հասարակութեան մեծամասնութեան համար: Հայաստանի մէջ իրավիճակը նոյնն է եւ, վերլուծաբանին համաձայն, «մօտ ապագային Միացեալ Նահանգները պիտի չօգտակուին»:

Ներագրման լծակներէն, որովհետեւ այդ պիտի ընթացքին Պուշկինի վարչակազմին հարցով հանգանքը աւելի կը համակրին տագնապի, այս կամ այն կողմին: Միացեալ Նահանգներ պէտք է ճշնեցնել կողմերու դեպքերը երկու կողմերու վրայ, որովհետեւ Միացեալ Նահանգները կողմէ ազդէ Հայաստանի շրջանցել հասարակական կարծիքը:

Ըստ Սթիվըն Իկի, Միացեալ Նահանգներու վարչակազմին մէջ կան թէ՛ հայաստանամէտ եւ թէ՛ ազրպէյճանամէտ ու-

ժեր: Մասնաւորապէս, «Նախընտրական արշաւին ընթացքին Պուշկինի վարչակազմին հարցով հանգանքը աւելի կը համակրին տագնապի, այս կամ այն կողմին: Միացեալ Նահանգներ պէտք է ճշնեցնել կողմերու դեպքերը երկու կողմերու վրայ, որովհետեւ Միացեալ Նահանգները կողմէ ազդէ Հայաստանի շրջանցել հասարակական կարծիքը»:

## «ԲԱԳՐԱՏԱՇԷՆԻ ՇՈՒԿԱՆ ՈՒՂԻՂ ԿԱՊ ՈՒՆԻ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ՀԵՏ»

ԿԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐՊԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Հայաստանի ելեւմուտքի եւ տնտեսութեան նախարար Վարդան Խաչատրեանի համոզումով, Բագրատաշէնի շուկայի ուղիղ կապ ունի փտածութեան հետ եւ զայն պէտք է փակել:

Ըստ Վ. Խաչատրեանի, իր այս տեսակէտին համար այս շրջանի ժողովուրդը զինք թշնամի կը նկատէ՝ շուկայի բարիքներէն չօգտուելով հանդերձ: Իսկ շուկային մէջ մեծ մասամբ մաքսանկարութեան ճամբով իրականացուող եւ հարկումի չենթարկուող տարեկան շրջանառութիւնը, նախարարին գնահատումով, կը կազմէ 300-400 միլիոն տոլար:

Դարձեալ ըստ Վ. Խաչատրեանի, Հայաստան - Վրաստան յարաբերութիւնները շրջագիծին մէջ քննարկման արժանացած սահմանները շուկայի հարցին վրացական կողմը անհրաժեշտ լրջութեամբ տակաւին չէ անդրադարձած, հակառակ տրուած խոստումներուն:

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԿԵՍԸ ԶՔԱՒՈՐ Է ԱՆԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ»

Կ'ԸՍԵ ՕՈՒԷՅՍ ՍԱՍԱՆՈ

Համաշխարհային Դրամատան «Փոքր դրամաշնորհներ - 2000» ծրագրի ինթիլական օժանդակութեամբ եւ Ազգաբնակչան հետազօտութիւններու հայկական «Հագարաշէն» կեդրոնի ջանքերով լոյս տեսած է «Պատմութիւններ աղբատութեան մասին» գիրքը:

Գիրքը կը ներկայացնէ Հայաստանի գանազան մարզերուն մէջ եօթը փոփոխական արշաւներու ընթացքին ազգաբան - հեղինակներու արձանագրած հարցազրոյցները, որոնց միջոցով «ընթերցողը կրնայ մտնել աղբատութեան աշխարհ»:

Գիրքի ներկայացման ընթացքին Համաշխարհային Դրամատան Երեւանի հետազօտութիւններու հայկական «Հագարաշէն» կեդրոնի ջանքերով լոյս տեսած է «Պատմութիւններ աղբատութեան մասին» գիրքը:

Գիրքը կը ներկայացնէ Հայաստանի գանազան մարզերուն մէջ եօթը փոփոխական արշաւներու ընթացքին ազգաբան - հեղինակներու արձանագրած հարցազրոյցները, որոնց միջոցով «ընթերցողը կրնայ մտնել աղբատութեան աշխարհ»:

## ՇԷՆ ՖՐԱՆՍԱ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՐՅԸ ՎԵՐՋ ԿԸ ԳՏՆԷ Ի ՆՊԱՍՏ

ՇԷՆ ՖՐԱՆՍԱՅԻ

ՕՒՆ Ֆրանսա կազմակերպութեան վարչութիւնը յայտարարութեամբ մը կը տեղեկացնէ, թէ կազմակերպութեան եւ Հայաստանի պետական եկամուտներու նախարարութեան միջեւ ստեղծուած հարցը վերջ գտած է ի նպաստ իրեն:

Յիշեցնենք, թէ անցեալ տարուան 18 Սեպտեմբերին պետական եկամուտներու նախարարութիւնը պայտիմի ներածումներու մասին իր յայտարարութեան մէջ ՕՒՆը զրպարտած էր թմրեցուցիչներու մաքսանկարութեամբ:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի ուղղած իր 21 Յունուարի նամակով պետական եկամուտներու նախարարը յայտնած է հետեւեալը.

«Պետական եկամուտներու նախարարութեան կողմէ կատարուած յայտարարութեան առնչութեամբ, կը տեղեկացնենք, որ տեղի ունեցած է թիրիմացութիւն մը, որ անեւ հաստատուած է քննչական մարմիններու կողմէ Ազուտ հարցին վերաբերեալ քրեական գործի մարտնչութեամբ»:

ՕՒՆ Ֆրանսա իր յայտարարութեամբ գոհունակութիւն կ'արտայայտէ այս հարցի աւարտին համար եւ շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք զօրակցեցան կազմակերպութեան եւ օժանդակեցին ճշմարտութիւնը պարզելու համար:

## ԱՅՍ ԵՐԵԿՈՅ՝ ԸԱՅՐԵՆԻ ՕՓԵՐԱՅԻՆ ԱՍՏՂԵՐԸ ԷՍԵՄՊԼԻ ԸՈԼԻ ՄԷՋ

Լիբանանահայ բարձրարուեստ երաժշտական կեանքը հեքոտ եռուցուի մէջ է: Անցեալ ամսուան ընթացքին հայ երաժիշտներ տարբեր սրահներու եւ ծրագրերներու մէջ ելոյթներ ունենալով երաժշտական գարուն կը բերեն մեր կեանքին: Շահան Արծրունի, Ռուպէրթ Ամիրխանեան, Զարեհ Զեյնաբեան, իրապէս Գայանեան եւ ուրիշներ... Իսկ անաւանակ այս երեկոյ, Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի ըոլ»-ի մէջ, Համազգայինի Լիբանանի շրջանային վարչութեան կազմակերպութեամբ եւ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեանի նախագահութեամբ ելոյթ պիտի ունենան Հայաստանի Ազգային Ակադեմիական Օփերային թատրոնի աստղերէն մենբրգիչներ Քրիստինէ Սահակեան եւ Կոնստանդին Սիմոնեան:

Տասնամեակ մը առաջ Հայրենի արուեստը Լիբանանի ու Լիբանանահայ յուլութեան մատուցելու իր առաքելութեան մէջ, տնտեսական համամտաբար աւելի լաւ պայմաններու մէջ գտնուող մեր գաղութը, յատկապէս Համազգայինը, ջանք չէ ինչպէս բարձրարուեստ ու շատ յաճախ բազմադրամ երաժշտական թէ՛ արուեստի այլ բնագաւառներու պատկանող երեւելի խումբերուն հիւրահամերգները կազմակերպելու եւ այդ ճամբով Հայրենիք - Սփիւռք մշակութային առողջ ու շահաւէտ գործակութիւն մը ստեղծելու: Այս իմաստով, վերջին քանի մը տարիներու ակամայ ընդմիջումէն ետք, անաւանակ այսօրուան համերգը, յարգութեան պարագային նոր սիլիք մը կրնայ շնչաւորել:

Վերջերս, շատ մը երաժշտաւէրներ Օփերային թատրոնի լիբանանեան ելոյթներուն ընթացքին, Վերտիի «Լա Թրափաթա» օփերայի մէջ վերջուցած իրենց դերերգներով հմայուեցան Կոնստանդին Սիմոնեանի (ժերոնով) եւ Քրիստինէ Սահակեանի (Աննա) յարգողական երեք օրերու կատարումներով: Անոնց համար, եւ երաժշտաւէր շատ ուրիշներու համար այսօր առիթն է ըմբռնելու միջազգային համբաւ ունեցող օփերային արիաներու թէ՛ հայկական դերերգներու եւ երգերու անոնց կատարումները:

